ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ:
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՊՄՀ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ՝
ՊԱՏՄ. ԳԻՏ. ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
15.12.2023թ.

ԿԱՐԾԻՔ

Վարդուհի Վրույրի Սիմոնյանի «ՀՀ հասարակական-քաղաքական կյանքը 1991-2001 թթ.» Է. 00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

2023 թ. դեկտեմբերի 15-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի նիստը, որին մասնակցում էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը, պատմ. գիտ. դոկտորներ, պրոֆեսորներ Ա. Փիլիպոսյանը, Վ. Վիրաբյանը, Ս. Պողոսյանը, պատմ. գիտ. թեկնածուներ, դոցենտներ Է. Հովհաննիսյանը, Է. Մելքոնյանը, Ա. Եփրիկյանը, Մ. Եղյանը, Ս. Խաչատրյանը:

Քննարկվեց Վարդուհի Վրույրի Սիմոնյանի «ՀՀ հասարակական-քաղաքական կյանքը 1991-2001 թթ.» թեկնածուական ատենախոսությունը՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար:

Ելույթ ունեցան ատենախոսության գրախոսներ, պատմ. գիտ. դոկտոր, Վ. Վիրաբյանը, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը, ովքեր հրապարակեցին իրենց գրավոր կարծիքները:

Պատասխան ելույթով հանդես եկավ ատենախոս Վ. Սիմոնյանը:

Քննարկման արդյունքներն ամփոփեց ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը:

Հայաստանի Հանրապետության նորագույն ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի հարցերը մշտապես գտնվել են հայ պատմաբանների ուսումնասիրության ոլորտում: Հիմնահարցի վերաբերյալ հրատարակվել են արխիվային նյութեր և փաստաթղթերի ժողովածուներ, լույս են տեսել մենագրություններ, պաշտպանվել ատենախոսություններ: Անտարակույս 1991 թ. անկախության հռչակմամբ հիմք դրվեց հասարակական-քաղաքական կյանքի ազատականացմանը և արմատական վերափոխմանը, կոմունիստական միա-

կուսակցական մենատիրությունից ու առանձնաշնորհից անցումը բազմակուսակցական համակարգին, որը նոր արժեհամակարգի ձևավորման առումով էական առաջընթաց էր:

Ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններից և օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից բաղկացած աշխատանքում ատենախոսը ներկայացրել է հիմնահարցի այժմեականությունը, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, մեթոդաբանությունը, ժամանակագրական շրջանակները և ուսումնասիրության աստիճանը: Կատարած աշխատանքի շնորհիվ գիտական պատմաքննության են ենթարկվել հիմնահարցի առավել կարևոր կողմերը:

Հեղինակը լուսաբանել է անցման շրջանի օրինաչափությունները, ցույց տվել, թե ինչպիսի բազմաբնույթ գործընթացների արդյունքում ՀՀ-ն որոշակի պատմափուլում ժամանակահատվածը քաղաքական բազմաթիվ գործիչների, քաղաքագետների կողմից համարվեց Հայաստանի Հանրապետության ժողովրդավարացման լավագույն փուլը:

Վ. Սիմոնյանը ցույց է տվել ՀՀՇ-ն որպես կառավարող քաղաքական առաջատար ուժ դառնալու դրդապատճառները, այնուհետև ՀՀ անկախացման առաջին փուլում ՀՀՇ-ի որպես իշխանության որդեգրած ռազմավարությունը, որը երկրորդ փուլում ՀՀՇ-ի կողմից վերաձևման ենթարկվեց: Շրջադարձվեցին մարտավարական մոտեցումները, փոփոխվեց սկզբնական փուլում ունեցած դիրքորոշումը՝ փոխակերպման ենթարկելով մի շարք սկզբունքային հարցեր, քաղաքական հայեցակարգային մոտեցումներ և մարտահրավերներ, մասնավորապես հայդատական պահանջատիրության և ցեղասպանության ճանաչման գործընթացի առաջնահերթության հարցերում: Հեղինակն ընդգծում է, որ ՀՀՇ-ն այդ եզրահանգմանն եկավ և հակադրվեց այլ քաղաքական ուժերին, պատճառաբանելով, որ դա խոչընդոտում է հարևանների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը, կարծելով, որ այլապես Հայաստանը կմնա շրջափակման ու մեկուսացման վիճակում և չի բարգավաճի: Բնականաբար այն չընկալվեց հասարակության մի զգալի հատվածի և կուսակցությունների կողմից, քանզի դա սերտորեն առնչվում էր նոր արտաքին-քաղաքական առաջնահերթությունների օրակարգային դարձնելու չափազանց պատասխանատու խնդրի հետ և լի էր վտանգներով, ինչի ականատեսն ենք այսօր:

Վ. Սիմոնյանը ցույց է տվել, որ անկախության հռչակմամբ Հայաստանի Հանրապետությունը գնաց մի շարք համալիր բնույթի գործառույթների իրականացման, վճռաբար անցում կատարելով նախազահական և խորհրդարանական համակարգերին, որը ժողովրդավարացման գործընթացների արմատավորման առումով որոշակի առաջընթաց համարվեց, նոր արժեհամակարգ՝ ժողովրդավարական պետության կառուցման ճանապարհին, անկախ Հայաստանի նոր և հնարավոր տեսլականը:

Ատենախոսը եկել է այն եզրահանգման, որ իրագործված վերափոխումների կարևոր արդյունքներից էին արդարադատության համակարգի փոփոխությունները և հատկապես Հիմնական օրենքի՝ Սահմանադրության ընդունումը և 1996 թ. փետրվարին Սահմանադրական դատարանի ստեղծումը, որը աննախադեպ երևույթ էր ժողովրդավարացման ուղիով ընթացող ՀՀ հասարակական-քաղաքական կյանքում:

Ատենախոսի կարևոր արժևորումներից է այն, որ լուրջ քայլեր կատարվեցին հասարակական կյանքի ազատականացման բնագավառում, ձևավորվեց բազմակուսակցականությունը և բազմակարծությունը, ձևավորվեց ազգային արժեքների նոր համակարգ, առաջադրվեցին բազմաբևեռ մոտեցումներ Հայոց Մեծ ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում: Միաժամանակ արժևորվել է Անկախության Հռչակագիրը որպես ՀՀ նոր Սահմանադրության նախահիմք, որով հաստատագրվեց ՀՀ ինքնիշխանության պատմափաստը իր լիիրավությամբ:

Վ. Սիմոնյանը ժողովրդավարական Հայաստանի կարևորագույն արժեքներից մեկը համարել է բազմակուսակցական համակարգի ձևավորումը, որը միաժամանակ ուղեկցվեց արհեստածին կուսակցությունների, միությունների և դաշինքների ստեղծմամբ, ընտրական գործընթացների խեղաթյուրմամբ, կեղծմամբ, տարբեր խավերի ապաքաղաքականացմամբ:

Հեղինակը կարևոր տեղ է հատկացրել տեղական ինքնակառավարման համակարգի վերափոխումների ոչ միանշանակ գործընթացներին, կարևորել նորացման գործառույթները: Հասարակական-քաղաքական կյանքի վերափոխման և ժողովրդավարական գործընթացների զարգացումները հանգեցրեցին հասարակական-քաղաքական կյանքում բնակչության տարբեր շերտերի ներգրավվածության որոշակի խորացմանը: Հեղինակը կարծում է, որ հենց այդ գործընթացների արդյունքում ձևավորվեց միանգամայն նոր հասարակական-քաղաքական արժեհամակարգ՝ նպաստելով ՀՀ ժողովրդավարության գործընթացների ամրապնդմանը:

Աշխատանքում բացահայտվել է կոմունիստական մենատիրությունից ինքնիշխան ժողովրդավարական պետության տրանսֆորմացիայի պատմաքաղաքական կարևորությունը և մատնանշվել ուղեկցող մի շարք բարդույթներ, օբյեկտիվ ու սուբյեկտիվ կարգի դժվարություններ և բացասական շերտանստվածքներ:

Ատենախոսը հիմնավոր փաստերով բացահայտել է, որ հենց հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին հիմնարար օրենքը նպաստեց ժողովրդավարական գործընթացների ամրապնդմանը և խորացմանը, հասարակության տարբեր խավերում սերմանեց ժողովրդավարական մտածելակերպի և ժողովրդավարության համակարգի անհրաժեշտության իմաստավորման կարևորագույն տարրեր՝ հնարավորինս հաշվառելով այդ գործում առաջատար

եվրոպական երկրների ժողովրդավարական արժեքների հարուստ և ուսանելի փորձն ու սեփական երկրի ազգային-քաղաքական ավանդույթները:

Նա կարևորել է ընդդիմության և իշխանության փոխհարաբերությունների վերհանումը: Դժբախտաբար այդ ընթացքում եղան նաև բացասական հեռահար հետևանքներ ունեցող նահանջներ, սխալներ և սայթաքումներ:

Վ. Սիմոնյանը փաստերի հիման վրա ամբողջական առումով դիտարկել է քաղաքական ուժերի տրամադրվածությունը, դիրքորոշումը հասարակական-քաղաքական առաջնահերթ նշանակության և սկզբունքային բնույթի հարցերի շուրջ, եզրահանգելով, որ այդ քաղաքական ուժերի ուժերի կողմից ոչ միշտ է այդ հարցերում անաչառ մոտեցում ցուցաբերվել: Հարցի մի շարք կողմեր դիտարկվել են հասարակական հասարակական-քաղաքական գործընթացներում տարբեր խավերի ներգրավվածության բավարար և ոչ բավարար լինելու մեկնակետից:

Ատենախոսությունում աներկբա ցույց է տրված, որ անկախությամբ պայմանավորված ժողովրդավարական արժեքների ամրապնդման գործընթացում անգնահատելի էր զանգվածային լրատվամիջոցների դերը, որն ուղեկցվեց ընդդիմադիր և ոչ ընդդիմադիր մամուլի և այլ միջոցների սուր բախմամբ, վերհանելով նրանց միջև առկա տարակարծությունների մեծ շերտ՝ հատկապես իշխանության կազմակերպման, ՀՀ արտաքին-քաղաքական առաջնահերթությունների որոշման և իրատեսական պետաքաղաքական պլանների ու ծրագրերի առաջադրման, ՀՀ սոցիալ-տնտեսական հեռանկարային ուղղությունների ընտրանքի, Հայ դատի և Ցեղասպանության ճանաչման, օրենսդիր և գործադիր իշխանությունների հարաբերակցության, արցախյան հիմնախնդրի լուծման ոլորտում իրարամերժ, տեղ-տեղ անընդունելի տարբերակների շուրջ:

Ատենախոսը կարևոր տեղ է հատկացրել ինչպես հասարակական-քաղաքական կյանքի բնականոն ընթացքի զարգացումներին, այնպես էլ 1996 թ. ընտրությունների արդյունքների կեղծման պատմաքննությանը, որն ուղեկցվել էր քաղաքական ուժերի առճակատումով ու հանգեցրել 1998 թ. սուր քաղաքական ճգնաժամին և ՀՀ նախագահի հրաժարականին:

Վ. Սիմոնյանի կարևոր հետևություններից մեկն էլ այն է, որ հասարակական քաղաքական կյանքի միտումները 1991-2001 թ. առաջացրին քաղաքական դաշտի սրվածություն և երկփեղկվածություն, ընտրազանգվածի հիասթափություն և վստահության կորուստ, որն արդյունարար առումով ավարտվեց ՀՀՇ-ին հակադիր հայեցակարգ ունեցող քաղաքական ուժի հաղթանակով՝ իշխանափոխությամբ:

Հեղինակը վստահաբար պնդում է, որ հետազոտված պատմափուլի ավարտը եղավ 1999 թ. հոկտեմբերի 27-ի քաղաքական լուրջ ճգնաժամը, որն արձանագրեց այդ փուլի պետականության ամենամեծ ճգնաժամի փաստը: Երկիրը կանգնեց պետականության և իշխանության ամենամեծ

ճգնաժամի առաջ, ինչն էլ ի վերջո հանգեցրեց լեգիտիմության կորստի, շրջափուլային բացասական հետևանքների և նահանջների:

Վերլուծելով և արժևորելով ՀՀ-ում 1991-2001 թթ. ընտրական գործընթացները, ատենախոսը բացահայտել է դրանցում տեղ գտած դրական միտումները, ընտրությունների մասին պատկերացումների փոխակերպումները՝ դիտարկելով ժողովրդավարական արժեքների ամրագրման հետագա հեռանկարների տրանսֆորմացիան և հետևանքները: Ատենախոսը փորձել է վերլուծել ուժային-վարչական ռեսուրսների միջոցով քաղաքական դաշտում միահեծան գերիշխելու և իշխանության ղեկին անթույլատրելի ու անընդունելի եղանակներով մնալու քաղաքական ուժերի կողմից ձեռնարկած գործողությունների պատճառահետևանքային կողմերը:

Կարևորվել է ընտրություններին հասարակության տարբեր խավերի մասնակցության հարցում տարբեր հասարակական խավերի վստահության մոտիվացիայի հարցի բացատրությունը և այդ ոլորտում բացթողումների, սայթաքումների և անթաքույց զեղծարարությունների թողած հետևանքներն ու վնասները:

Ամփոփելով 1991-2000 թթ. հասարակական-քաղաքական կյանքի տարբեր կողմերի իր հետազոտական որոնումները, Վարդուհի Սիմոնյանը եկել է հետևության, որ ինչպես 1991-1995 թթ. անկախացման առաջին փուլի, այնպես էլ երկրորդ փուլի՝ 1996-2001 թթ. Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի համակարգային շրջադարձերի, 1998 թ. կտրուկ իշխանափոխության գլխավոր ազդակները և կովանները եղել են 1980-ական թթ. երկրորդ կեսում ղարաբաղյան շարժմամբ ծնված համաժողովրդական իրադարձությունները: Ըստ ատենախոսի, հենց այդ գործոններն էլ մեծապես պայմանավորեցին և կանխորոշեցին հետագա պատմաընթացքի բոլոր կարևորագույն փոխակերպումներն ու վերաձևումները, քաղաքական համապարփակ ընդգրկումները ներքին և արտաքին-քաղաքական առաջնահերթությունների ձևավորման ու որոշման համար:

Որոշակիորեն արժևորելով ատենախոսի կատարած աշխատանքը, հարկ ենք համարում արտահայտել որոշ դիտողություններ և ցանկություններ.

1. Աշխատանքն ավելի կշահեր, եթե ատենախոսը օգտագործեր հիմնահարցին առնչվող օտարալեզու հեղինակների ուսումնասիրությունները, հետխորհրդային պատմագիտական և քաղաքագիտական համապատասխան աշխատությունները: Միաժամանակ ավելորդ ենք համարում ատենախոսությանը ժամանակագրորեն չառնչվող աշխատությունների վկայակոչումը /Լ. Խուրշուդյան, Ռ. Միրզախանյան և ուրիշներ/:

2. Մեր համոզմամբ, գիտականորեն հիմնավորման կարիք ունի թեմայի ուսումնասիրության ժամանակագրական շրջանակը, հատկապես 2001 թվականը:

3. Տեղին կլիներ, որ հասարակական-քաղաքական կյանքի փոխակերպումները և իրողությունները դիտարկվեին նաև հետխորհրդային որոշ հանրապետություններում, մասնավորաբար հարևան երկրներում ընթացող համանման գործընթացների հետ համեմատության մեջ:

4. Որոշակի խմբագրման կարիք ունի նաև ատենախոսության առաջին գլխի 4-րդ ենթագլուխը *«Բարեփոխումները* ՀՀ հասարակական-քաղաքական կյանքում. ՀՀ Սահմանադրության ընդունումը և 1996 թ. նախագահական ընտրությունները»: Ավելի ճիշտ կլիներ ձևակերպել հետևյալ կերպ *«Բարեփոխումների ազդեցությունը* ՀՀ հասարակական-քաղաքական կյանքում. ՀՀ Սահմանադրության ընդունումը և 1996 թ. նախագահական ընտրությունները»:

5. Հաճախ ատենախոսը անդրադառնում է արտաքին քաղաքականությանը, Արցախյան հիմնախնդրին վերաբերող այնպիսի հարցերի, որոնք անմիջականորեն թեմային չեն առնչվում: Նկատի ունենք նաև Ա. Ոսկանյանի, Թոմաս դե Վաալի, Ջ.Ջառիֆյանի և այլոց աշխատությունների վկայակոչումը:

6. Աշխատանքը զերծ չէ նաև երկարաշունչ ձևակերպումներից և նախադասություններից և որոշակի խմբագրման կարիք ունի:

Անտարակույս, նշված դիտողություններն ու ցանկությունները ավելի կատարյալ գիտական հետազոտություն ունենալու նպատակ են հետապնդում և չեն նսեմացնում հեղինակի կատարած աշխատանքը: Այն համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, պատրաստ է հրապարակային պաշտպանության, իսկ հեղինակն էլ արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ գիտական աստիճանին:

Կարծիքը հաստատված է ամբիոնի 2023 թ. դեկտեմբերի 15-ի նիստում /արձանագրություն թիվ 8/:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտ.՝ պրոֆ. Է. Գևորգյան

Պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանի ստորագրությունը հաստատում եմ.
ՀՊՄՀ գիտ. քարտուղար դոց. Մ. Խպլիրյան

15.12.2023 թ.